ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/334

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.12.2021թ. թիվ 26/26-1/21117-2021 գրությամբ «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 17.12.2021թ. թիվ 1/18-2/81539-2021 գրության հիման վրա, 21.12.2021թ. թիվ 26/26-1/21117-2021 գրությամբ նախաձեռնել է «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Արմա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արմա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Արմա թրեյդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/334 ընթացակարգի շրջանակներում 27.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.12.2021թ. թիվ 1/18-2/81539-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ սույն թվականի հուլիսի 26-ին Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2021 թվականի հուլիսի 26-ին կնքվել է ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/13-2 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի համաձայն Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված պայմաններով մատակարարել համապատասխան ապրանքները: Վաճառողը մատակարարել է Պայմանագրով սահմանված 5-րդ և 6-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները, իսկ 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը չի մատակարարել:

Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով 2021թ. դեկտեմբերի 9-ից Պայմանագիրը մասամբ միակողմանի լուծվել է:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ «Արմա Թրեյդ»-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/334 ընթացակարգի շրջանակներում 27.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/334 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/334 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 26.07.2021թ. կնքվել է թիվ «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/13-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ մատակարարման ժամանակացույցով, տնտեսող լամպերի համար սահմանվել է հետևյալը.

Ապրանքի					
Հրավերով նախատեսված չափաբաժնի համար	Չափման միավոր	Ընդհանուր քանակ	մատակարարման		
			հասցեն	Ենթակա քանակը	ժամկետը
2	հատ	500	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3,7	500	Ապրանքի մատակարարումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
5	հատ	200	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3,7	200	Ապրանքի մատակարարումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
6	հատ	200	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3,7	200	Ապրանքի մատակարարումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

3. ՀՀ ՊԵԿ ԳԿՎ պետը, ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղարին ուղղված 06.12.2021թ. թիվ Ն/18-1/219805-2021թ. գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ սույն թվականի հուլիսի 26-ին ՀՀ ՊԵԿ և «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև կնքվել է ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/13 ծածկագրով պայմանագիր, որի համաձայն Ընկերությունը պարտավորվել էր մինչև սույն թվականի օգոստոսի 16-ը մատակարարել համապատասխան ապրանքները (լույսեր): Ընկերության կողմից մատակարարվել են

պայմանագրով հաստատված 5-րդ և 6-րդ չափաբաժինները 2-րդ չափաբաժինը մինչ օրս չի մատակարարվել, որը խոչընդոտում է ՀՀ ՊԵԿ բնականոն գործընթացին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ Ձեր հանձնարարականը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գնումների համակարգման բաժնին, միակողմանի լուծել սույն թվականի հուլիսի 26-ին ՀՀ ՊԵԿ և «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/13 ծածկագրով պայմանագիրը: (...)»:

4. ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 08.12.2021թ. թիվ 1/18-2/79136-2021 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ սույն թվականի հուլիսի 26-ին ՀՀ ՊԵԿ և «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև կնքվել է ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/13 ծածկագրով պայմանագիրը: Պայմանագրի համաձայն Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված պայմաններով մատակարարել համապատասխան ապրանքները: Վաճառողը մատակարարել է Պայմանագրով սահմանված 5-րդ և 6-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները, իսկ 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը չի մատակարարել:

Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով գնորդը ստիպված է 2021թ. դեկտեմբերի 09-ից Պայմանագիրը մասամբ միակողմանի լուծել»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 09.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.12.2021թ. թիվ 26/26-1/21117-2021 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 17.12.2021թ. թիվ 1/18-2/81539-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ

մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 26.07.2021թ. կնքվել է թիվ «ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/13-2» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված

կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Պայմանագրին կից հավելված N 2-ով՝ մատակարարման ժամանակացույցով, տնտեսող լամպերի համար սահմանվել է հետևյալը.

Ապրանքի					
Հրավերով նախատեսված չափաբաժնի համար	Չափման միավոր	Ընդհանուր քանակ	մատակարարման		
			հասցեն	Ենթակա քանակը	ժամկետը
2	հատ	500	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3,7	500	Ապրանքի մատակարարումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
5	հատ	200	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3,7	200	Ապրանքի մատակարարումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
6	հատ	200	ՀՀ ՊԵԿ Մ.Խորենացի 3,7	200	Ապրանքի մատակարարումը իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագիրը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստորագրվել է 26.07.2021թ.:

ՀՀ ՊԵԿ ԳԿՎ պետը, ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղարին ուղղված 06.12.2021թ. թիվ Ն/18-1/219805-2021թ. գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ սույն թվականի հուլիսի 26-ին ՀՀ ՊԵԿ և «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև կնքվել է ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/13 ծածկագրով պայմանագիր, որի համաձայն Ընկերությունը պարտավորվել էր մինչև սույն թվականի օգոստոսի 16-ը մատակարարել համապատասխան ապրանքները (լույսեր): Ընկերության կողմից մատակարարվել են պայմանագրով հաստատված 5-րդ և 6-րդ չափաբաժինները 2-րդ չափաբաժինը մինչ օրս չի մատակարարվել, որը խոչընդոտում է ՀՀ ՊԵԿ բնականոն գործընթացին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ Ձեր հանձնարարականը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գնումների համակարգման բաժնին, միակողմանի լուծել սույն

թվականի հուլիսի 26-ին ՀՀ ՊԵԿ և «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/13 ծածկագրով պայմանագիրը: (...)»:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 08.12.2021թ. թիվ 1/18-2/79136-2021 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ սույն թվականի հուլիսի 26-ին ՀՀ ՊԵԿ և «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի միջև կնքվել է ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2021/13 ծածկագրով պայմանագիրը: Պայմանագրի համաձայն Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված պայմաններով մատակարարել համապատասխան ապրանքները: Վաճառողը մատակարարել է Պայմանագրով սահմանված 5-րդ և 6-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները, իսկ 2-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը չի մատակարարել:

Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով գնորդը ստիպված է 2021թ. դեկտեմբերի 09-ից Պայմանագիրը մասամբ միակողմանի լուծել»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 09.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***<u>10 օրից ավելի</u>***:

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ արձանագրում եմ, որ «Արմա թրեյդ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ պետական եկամուտների միջև 26.07.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.12.2021թ. թիվ 26/26-1/21117-2021 գրությամբ «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**